

ԶՈՒ ԿՈՒԿԱՆՑ

— ՎԵՐԱՎՈՐ ՎԵՐԱՎՈՐ —

Կանչիւն կըրկչաձայն հարկանի երկնից
Խաղաղածաւալ ընդ խորս այերաց .
Աչք եւ ունկն ի թունդ եւ սիրտ սարսուալից
Յառին երկնապիշ , ձայն էր կըռընկանց .
Աշխարհաց մերոց պանդուխտք բերկրաբերք .
Ի չու վերադարձ՝ պընդին ընդ եթերք :
Կանչ ի կանչիւն յեռեալ պահ պահ
Մեղ հուսկ հրաժեշտ պաշտեն զիւրեանց .
Գրլեն զլերամբ գոռ , բարձրագահ ,
Լըքեալ ըզմարդ , ըզդաշտ ծաղկանց :
Երթայք ողջ կունկունք
Զեղ կան քաղցր ափունք ,
Մինչ մեղ առ դրունս արդ վերահաս
Կան սուգ , թախիծ , մահու սարաս :
Այլ վերըստին յայսրէն ձեր դարձ աւետաւոր ,
Բերջիք մեղ զուարթ գարուն ծաղկամբք պըսակաւոր :
Դարձեալ թիթեռնիկ
Թեւեսցէ զվարդիւք ,
Խայտալով մանկիկ
Ընդ հետարն կանչիւք :

Տակաւ խորք երկնից յանձկայրեաց մերոց
Աչաց հետախոյդ՝ ըզձեղ գողանան .
Խառնիք դուք անկոյթ ընդ այդ դաշտ ամբոց
Յարթուն պարառաջ ձեր ցանդ ապաստան .
Մերթ ի բոլորակ՝ յօրինեալ զերդ պար ,
Մերթ ճախր ի ճոպան խաղայք ընդ երկար ,
Ըզցուրտ ձըմեռն արկեալ ըզկնի .
Եւ արկանէք դալուկ տըմոյն
Ծնդ լուսագեղ երեսս երկնի .
Շուք՝ փայլ բառնին յերկրէ եւ գոյն :

Երթայք ողջ կողնկունք
Զեղ կան քաղցր ափունք .
Մինչ մեղ առ դրունս արդ վերահաս
կան սուդ , թախիծ մահու ապաս :
Այլ վերըստին յայսրէն ձեր դարձ աւետաւոր ,
Բերջիք մեղ զուարթ գարուն ծաղկամբք պըսակաւոր :
Դարձեալ մանիշակ
Զնախընծայ իւր խունկ
Արկցէ ընդ բաժակ .
Ծըխեսցին բուրմունք :

Մէդ խոնաւայոյզ շուրջ գայ ըզլերամբ ,
Ուստի ծաւալեալ զերկնիւք առնու բակ .
Երկիր համօրէն ծըրարեալ դոդ յամբ .
Ցելուլ չէ կարող ըզմութն՝ արեգակ ,
Որ տըխուր յընթաց , ի փայլ կէս ի կէս ,
Զիւր ընդ ճանապարհն հապճեալ ճեպէ ճեմս :
Առ լըրթագոյն տամուկ օդովք ,
Արտասուեն տունկք , տերեւք ոստոց ,
Եւ արջնաթոյրք առ հէք ծառովք
Վայրավատնին որ գօս որ խոց :
Երթայք ողջ կողնկունք
Մինչ ձեղ քաղցր ափունք
Պարզին ընթեր , մեղ խըրթնանան
Ահա հովիտն եւ անդաստան :
Այլ վերըստին յայսրէն ձեր դարձ աւետաւոր ,
Բերջիք մեղ զուարթ գարուն ծաղկամբք պըսակաւոր :
Դարձեալ երգարան
Յայց ելցէ մեղ հաւ .
Երգել մեր ունկան
Գեղգեղ նըւագաւ :

Զարթիցեն այսոց գուպարք բըռնաշունչ .
Հիւսիւսն ի սառոյց սըլասցի ընդ սարս .
Բըլլոց ի բըլլուրա՝ հարեալ սուր մըռունչ
Վազեսցէ անգուլ յուզել զտաղաւարս .
Հարկանել , կոծել զանտառ մայրոլորտ
Եւ հոսել թափել ըզսաղարթս յորդ յորդ .

Եւ ըզձեր բոյն եւ ըզդադար
Դընել յաւեր դառնատըխուր .
Եւ տերևոց խառն ընդ աւար
Լըքեալ եւ ձեր անկցի փետուր :
Երթայք ողջ կոընկունք
Զեզ կան քաղցր ափունք .
Մինչ մեզ առ դրունս արդ մօտալուտ
Կոծեալ մըրցին այսք ժանտաժուտ :
Այլ վերըստին յայսրէն ձեր դարձ աւետաւոր՝
Բերջիք մեզ զուարթ դարուն ծաղկամբք պըսակաւոր :
Դարձեալ զով զեփիւռ՝
Սիւդ կենսակայլակ
Շընչեսցէ յըսփիւռ .
Ժըմտին ծով, ցամաք :

Պաղեսցին յամպոց ծոց տեղք անձրեւաց,
Եւ ձիւն ցըրտադին թափեսցի ի մեզ .
Ըզգեցցի երկիր հանդերձ սառնամած ,
Երանք ծործորոց կապեսցին ի դէզ ,
Ցուրտ ձըմեռնատանջ առցէ զհամագոյս ,
Յամր հասցեն գիշերք . Եւ ընդ վարդալոյս
Նըշուլագեղն արեգական
Մեզ շաշեսցէ գօս կանթեղաց
Ճապաղ ճաճանչ նըւաղական
Բնդ գերանաւ մերոց յարկաց :

Երթայք դուք կոընկունք
Բնդ ջերոտ ափունք .
Մինչ կան առ դրունըս մեր ժաման
Խիստ ձիւն եւ ցուրտ , սառոյց դաժան .
Այլ վերըստին յայսրէն ձեր դարձ աւետաւոր՝
Բերջիք մեզ զուարթ դարուն ծաղկամբք պըսակաւոր .
Դարձեալ կենսաձիր
Մեզ ջերին արփիք
Բացցին ընդ երկիր .
Դարձցի այդ հեզիկ :

Այսրէն մեզ ողջամբ դարձնիք դուք կոընկունք .
Դեսպանք սերտ հաշտից եւ գուշակք բարեաց .

Դարձեալ նորակերտ կառուսցին կանդումք
Յարկք գերաբաստիկք ձեր օթեւանաց .
Բերկրեսցին այերք եւ մարդ ծաղկաբեր ,
Թեւոցդ ի թըռիչս , ոտիցդ ի դեզեր :
Այլ արդ երթայրք ողջամբ զուղիդ .
Տարջիք զողջոյն մեր կաթոգին
Հարազատաց եւ ծանօթից .
Եւ ըզդարձուած բերջիք նոցին ,
Զոյդ ընդ գարնայնոյն
Համբոյը հեշտագոյն :

Հ. Ա. Ե.

ՀԱՆԴԻՍ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ

(Հարունակութիւն . Էջ 272 :)

Մարդ .

Աշխարհք գալով նորածին տղան
Կընայ բանալ աչուրները , բայց բնա-
խօսք կը համարին թէ տեսութեան ըզ-
դայութիւն չունի , և թէ միայն քանի
մը շաբաթ ետև կը սկսի զգալ տեսա-
նելի առարկաները : Անկէ ետքը կ'ուզ-
դէ իր աչուրները առաւելապէս պայ-
ծառ կերպով լուսաւորուած առարկա-
ներուն , կամ թէ անոնց որ կենդանի
դրյն ունին : Կամաց կամաց կը սկսի զա-
նազանել չորա կողմն եղած առարկա-
ները , բայց ստուգուած է որ շատ ժա-
մանակէ ետև կը սկսի հեռաւորութեանց
կամ մեծութեանց գաղափարներն ու-
նենալ :

Այս բանս ճիշդ կը համաձայնի այն
զիտողութեանց հետ որ տեսնուեր են՝ ի
ծնէ կուրաց վրայ , որոնք անդամահա-
տութեամբք իրենց տեսութիւնը ստա-
ցեր են : Երբ ՚ի ծնէ կուրին հազիւ թէ
աչուրները բացուեր են , կարծեր է թէ
այն ամեն առարկաներն որ կը դիտէր՝
անմիջապէս իր աչուրներուն հետ կը

շօշափուէին , ոչ փոքրագոյն գաղափար
մը ունէր անոնց վերբերական հեռաւո-
րութեանցը , և ոչ ուրիշ ծանօթութիւն
մը անոնց մեծութեանցը կամ ձևոցը ,
բայց ՚ի ինչ որ անոնց ծրագրութիւնքը
կ'ընծայէին : Վերջապէս ամեն առար-
կայ իբր գունաւոր ուրուագիծ մը (Sil-
houette) կ'երևար՝ տեսութեան գործա-
րանացն անմիջապէս մօտ :

Միւս գործարաններն ալ հետզհետէ
կը կատարելագործուին վարժութեամբ:
Հինգ կամ վեց ամիս նորածին տղան
ուրիշ ձայն չհանէր , բայց եթէ անյօ-
դաւոր ճիչ մը : Կամաց կամաց կը սկսի
զգալ արտաքին առարկայից ախորժ
տպաւորութիւնները , և այս բանս կը
յայանէ իր ծիծաղներովը : Ճշերն հետ-
զհետէ ձայնի աստիճանն ու կերպա-
րանքը կ'առնուն և միանգամայն յօղե-
լու սկզբնաւորութիւն մը կը լսուի , և
առաջին տարւոյն ետքերը կը սկսի հըն-
չել միավանկ ամենապարզ բառերը :

Նորածին տղուն ոսկրները ըստ մեծի
մասին աճառաւոր են և բաւական ոյժ
չունին վեր բռնելու զինքը . Կամաց կա-
մաց և մննդեամբ կ'ընդունին զանոնք
կազմող հողային մասը՝ կը ի փոսփատ
ըստած , որ անոնց պնդութիւն կու-
տայ : Ոսկրներուն հետզհետէ հաստա-
տութիւն առնելու ժամանակ զանոնք